ISSN 1829-2925

Շողիկ

Shoghik
2024/2

AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Հասմիկ Հարությունյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Editorial Board:
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Hasmik Harutyunyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01Ս 000035
Հրատարակչության 23-րդ տարի

«Շողիկից» մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA) © ՀԱԵ / ECA

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 3.000:
Տարածվում է անվճար:

Հաղպատի Ավետարան, ծաղկող Մարգարե, 13 դ.

«ԱՐԴԱՐԵՎ, ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻ ԷՐ...»

Հիսուսին խաչող հարյուրապետն ու զինվորները զարմանքից քար կտրեցին, երբ տեսան Նրա մահը: Ընդամենը մի քանի րոպե առաջ էր, որ ծաղրում էին Նրան և ձեռքերը գամում խաչափայտին: Իսկ քիչ անց ականատես եղան, թե ինչպես խավարեց երկինքը, երկրաշարժ եղավ, լսեցին խաչին գամված Հիսուսի խոսքերը: Նրանց համար պարզ դարձավ, որ Հիսուսը սովորական մարդ չէր, այլ Աստծու Որդի էր:

«Իսկապես այս մարդն արդար էր»,- Հովհաննեսի ավետարանում տեսնում ենք հարյուրապետի արձագանքը:

Այս ամենը մեզ ցույց է տալիս, որ նույնիսկ նրանք, ովքեր չէին հավատում Հիսուսին, կարող են ճանաչել Նրա աստվածային էությունը՝ տեսնելով Նրա գործերը և զորությունը: Սա մեզ հիշեցնում է, որ Աստված կարող է ճշմարտությունը հայտնել նույնիսկ նրանց, ովքեր ի սկզբանե պատրաստ չէին և ունակ չէին այն ընդունելու:

Այստեղից կարող ենք ենթադրել, որ հարյուրապետի և նրա զինվորների կյանքում ինչ-որ բան փոխվեց խաչի տակ: Նրանք, Հիսուսին ընդունելով որպես Աստծու Որդի, ստացան ոչ միայն աստվածհայտնության շնորհ, այլև փրկության և հավիտենական կյանքի հույս:

Իհարկե ամեն բան խաչի վրա չավարտվեց, որովհետև երեք օր անց Հիսուսը, հարություն առնելով, ապացուցեց նույնիսկ մահի վրա Իր իշխանությունը և ցույց տվեց, որ յուրաքանչյուրս, Իրեն հավատալով, կունանանք հավիտենական կյանք:

Սիրելի՛ բարեկամ, Հարության տոնը լավագույն ժամանակն է նորովի հասկանալու և ընդունելու, որ Հիսուսն իսկապես Աստված է և փրկության միակ ճանապարհը:

«Քրիստոս հարյավ ի մեռելոց . օրհնյալ է Հարությունը Քրիոստոսի»:

Հասմիկ Հարությունյան

Զարկի պատմությունը

Ժողովրդի միջից շատերն իրենց
հագուստները փռում էին ճանապարհին,
ուրիշներն էլ ծառերից ճյուղեր էին
կտրում ու ճանապարհին փռում:
Մատթեոս 21.8

Մինչ նրանք ուտում էին,
Հիսուսը վերցրեց հացը, օրհնեց,
կտրեց, տվեց աշակերտներին և ասաց.
«Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»:
Մատթեոս 26.26

Այդ ժամանակ տասներկուսից մեկը,
որ Հուդա Իսկարիովտացի էր կոչվում,
քահանայապետների մոտ գնաց ու ասաց.
«Ի՞նչ կցանկանաք ինձ տալ,
եթե ես նրան ձեզ մատնեմ»:
Նրանք երեսուն արծաթ կշռեցին,
տվեցին նրան:
Դրանից հետո նա հարմար առիթ էր
փնտրում նրան մատնելու:
Մատթեոս 26.14-16

Պետրոսը նրան ասաց.
«Թեկուզ բոլորն էլ քեզանով գայթակղվեն,
ես երբեք չեմ գայթակղվի»:
Հիսուսը նրան ասաց.
«Ճշմարիտ եմ ասում քեզ. այս գիշեր,
աքաղաղը դեռ չկանչած, երեք անգամ
կուրանաս ինձ»:
Մատթեոս 26.33-34

Եվ մի քիչ առաջանալով՝
երեսնիվայր ընկավ,
աղոթում էր ու ասում.
«Հա՛յր իմ, եթե հնարավոր է,
թող այս բաժակն ինձանից
հեռու անցնի.
բայց ոչ թե ինչպես ես եմ
կամենում, այլ ինչպես դու»:
Մատթեոս 26.39

Ապա նրան խաչեցին և նրա
հագուստները բաժանեցին՝
դրանց վրա վիճակ գցելով,
թե ով ի՛նչ պիտի վերցնի:
Մարկոս 15.24

Զինվորները փշերից պսակ
հյուսեցին, նրա գլխին
դրեցին ու ծիրանի հագցրին:
Հովհ. 19.2



Նա այստեղ չէ,
որովհետև հարություն առավ,
ինչպես ասել էր:
Եկեք տեսե՛ք այն տեղը,
որտեղ դրված էր:
Մատթեոս 28.6



Հովսեփը, մարմինը վերցնելով,
մաքուր կտավով պատանեց ու
դրեց նոր գերեզմանի մեջ,
որ փորել էր ժայռի մեջ:
Նա գերեզմանի մուտքին մի մեծ
քար գլորեց և գնաց:
Մատթեոս 27.59-60

Աղյուսակում գտիր նշված ցանկի բառերը՝ ուղղահայաց և հորիզոնական դիրքերով:

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ
ԱՎԱՁԱԿ
ԿԻՐԱԿԻ
ՀԻՍՈՒՍ
ՊԻՂԱՏՈՍ
ԽԱՉ
ԳԵՐԵԶՄԱՆ
ՄԱԳԴԱԼԵՆԱՅԻ
ՈՏՆԼԿԱ
ՀՈՒԴԱ
ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ
ԳԱԼԻԼԻԱ
ՁԻՆՎՈՐ
ԿԱՅԻԱՓԱ
ՎԱՐԴԱՊԵՏ
ԱՔԱՂԱՂ
ՌԱԲԲԻ
ՀՈՒՅՍ
ԳՈՂԳՈԹԱ
ՄԵՂՔ
ԱՇԱԿԵՐՏ
ՊԵՏՐՈՍ
ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ
ՔՐԻՍՏՈՍ
ՁԻԹԵՆՅԱՑ
ՀՐԵՇՏԱԿ
ԲԱՐԱԲԲԱ
ԷՄՄԱՎՈՒՍ
ԹՈՎՄԱՍ
ՀԱԿՈԲՈՍ
ԸՆԹՐԻՔ
ԱՂՈԹՔ
ԱԲԲԱ
ՎԱՐՇԱՄԱԿ
ՄԱՐԻԱՄ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ԿՅԱՆՔ

Հ	Ա	Վ	Ի	Տ	Ե	Ն	ՈՒ	Թ	Յ	ՈՒ	Ն	Հ	Ի	Կ	Ց	Ա	Ն	Ք
Ս	ՈՒ	Ս	Է	Մ	Մ	Ա	Վ	ՈՒ	Ս	Ը		Ն	Ո	Տ	Ն	Լ	Վ	Ա
Ք	Ա	Հ	Ա	Ն	Ա	Յ	Ա	Պ	Ե	Տ	Ր	Ա	Ն	+	Ա	Ս	Ձ	Ա
Ա	Վ	Ա	Ձ	Ա	Կ	Ց	Կ	Ի	Ր	Ա	Կ	Ի	+	Պ	Ե	Ս	Ի	Գ
+	Ա	Ե	Մ	Հ	+	Վ	Ա	Ր	Դ	Ա	Պ	Ե	Տ	Ի	Ճ	Հ	Ն	Ո
Ա	Բ	Ն	Ա	Ի	Մ	Ա	Տ	Ն	ՈՒ	Թ	Յ	ՈՒ	Ն	Ղ	Ձ	Ր	Վ	Ղ
Պ	Բ	Ա	Ր	Ս	Հ	Հ	Ա	Կ	Ո	Բ	Ո	Ս	Ը	Ա	Ի	Ե	Ո	Գ
+	Ա	Ճ	Շ	ՈՒ	Մ	Ա	Ր	Տ	ՈՒ	Խ	Ա	Չ	Թ	Տ	Թ	Շ	Ր	Ո
Յ	ՈՒ	Ն	Ն	Ս	Թ	Ո	Վ	Մ	Ա	Ս	Մ	Կ	+	Ո	Ե	Տ	Ա	Թ
Վ	Ա	Շ	Ա	Կ	Ե	Ր	Տ	ՈՒ	+	Կ	Ա	Ա	Յ	Ս	Ն	Ա	Ք	Ա
Ա	Մ	Գ	Ե	Ր	Ե	Ձ	Մ	Ա	Ն	Գ	Գ	Յ	Մ	Ա	Յ	Կ	Ա	Ն
Ր	Ա	Ք	Հ	Ը	+	Ո	Չ	+	Պ	Ա	Դ	Ի	Ե	Ո	Ա	Ք	Ղ	+
Շ	Ր	Հ	ՈՒ	Ա	Ղ	Ո	Թ	Ք	Ե	Լ	Ա	Ա	Ղ	Ո	Ց	Ր	Ա	Բ
Ա	Ի	Մ	Դ	Ո	Հ	ՈՒ	Յ	Ս	Տ	Ի	Ղ	Փ	Ք	Տ	+	Չ	Ղ	Ա
Մ	Ա	Ի	Ա	+	Գ	Ա	+	Ե	Ր	Լ	Ե	Ա	Թ	Ե	+	Ո	Ն	Ր
Ա	Մ	Ը	Ն	Թ	Ր	Ի	Ք	Չ	Ո	Ի	Ն	ՈՒ	Ր	Ա	Ց	ՈՒ	Մ	Ա
Կ	Հ	Ա	Ր	ՈՒ	Թ	Յ	ՈՒ	Ն	Ս	Ա	Ա	+	Ի	Մ	+	Մ	Ի	Բ
Հ	Ա	Մ	Բ	Ա	Ր	Ձ	ՈՒ	Մ	Ջ	Ո	Ց	Ց	Ռ	Ա	Բ	Բ	Ի	Բ
Ո	Վ	+	Հ	Ք	Ր	Ի	Ս	Տ	Ո	Ս	Ի	Ո	Վ	Հ	16	+	4	Ա

Մնացած տառերով կկարդաս աստվածաշնչյան համար:

Սլաքներով միացրու՛ աստվածաշնչյան մայրերին իրենց զավակների հետ.

Մարիամ	Հակոբ
Ռեբեկա	Հովսեփ
Ռահել	Աբել
Եվա	Իսահակ
Սառա	Հովհաննես Մկրտիչ
Եղիսաբեթ	Սամուել
Աննա	Հիսուս

ԿԻՆՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Պատմության և Աստվածաշնչի էջերը թերթելիս նկատում ենք, որ կանանց դերը հասարակության մեջ ամենևին էլ այնպիսին չի եղել, ինչպիսին այսօր է: Հատկապես Հինկտակարանյան ժամանակաշրջանում նրանք ցածր դիրք էին գրավում թե՛ հասարակության մեջ և թե՛ ընտանիքում:

Հին Կտակարանում ընտանիքը հայրիշխանության մոդելով էր ղեկավարվում, և կինն իր ողջ կյանքի ընթացքում կախման մեջ էր տղամարդուց. նախ՝ հորից, ամուսնանալուց հետո՝ ամուսնուց, իսկ այրիանալու դեպքում՝ որդուց: Այս վիճակը կնոջը տալիս էր պաշտպանվածություն, և չնայած խիստ բարքերին՝ կինը հարգված և սիրված էր ամուսնու և երեխաների կողմից:

Կինը կոչված էր մայր և տանտիրուհի լինելու և նրա պարտականությունների մեջ էր մտնում երեխաների դաստիարակությունը:

Աստված կանանց հայտնվել է առանձնահատուկ կերպով: Սամսոնի ծննդյան մասին հրեշտակից առաջինը տեղեկացավ Մանուեի կինը, Փրկչի մայրը լինելու մասին լուրը հրեշտակը Մարիամին հայտնեց: Աստված ընտրել է նաև մարգարե կանանց՝ Իսրայելի ժողովրդին իր կամքը հայտնելու համար: Նրանցից էր Մարիամը՝ Մովսեսի և Ահարոնի քույրը, Դեբորան, որ Իսրայելի դատավորներից էր: Մեզ հայտնի վերջին մարգարեուհին Աննան էր, որը տաճար եկավ մանուկ Հիսուսին տեսնելու:

Նոր Կտակարանում Հիսուսը կնոջ մասին խոսում է որպես Աստծու ստեղծածի՝ սիրով ու հարգանքով վերաբերվելով նրան: Կարելի է ասել, որ կանանց հանդեպ Հիսուսի վարվելակերպից են սկսում փոխվել տիրող մոտեցումները: Նա կնոջը և տղամարդուն հայտնում է նույն պատգամները՝ տալով փրկության մեկ ճանապարհ: Կանայք հետևում էին Հիսուսին բոլոր շրջագայությունների ժամանակ:

Նրանք ներկա էին խաչելությանը, և նույնիսկ առաջինը նրանց է հայտնվում հարուցյալ Հիսուսը: Հարությունից հետո աշակերտները՝ տղամարդ և կին միասին էին հավաքվում աղոթքի: Գաղատացիներին ուղղված թղթի 3.28-ում Պողոսը, ասելով՝ «դուք ամենքդ մեկ եք Քրիստոսով», մերժում է սեռային, ռասայական և սոցիալական տարբերությունների վերաբերյալ բոլոր նախապաշարումները:

Փիթեր ՄԱՐՏԻՆ

Ավետարան ըստ Ղուկասի, գլ. 22-23 (33 թ.)

Հիսուսի մահը

Հիսուսի հետ միասին խաչվեցին 2 ավազակ: Նրանց մարմինները փաթաթվեցին թաղման պատանքների մեջ: Գտի՛ր դրանք:

Մահացածներին աշխատում էին հնարավորինս շուտ թաղել: Գտի՛ր Հիսուսի ընկերներին, որոնք տանում են Նրա մարմինը:

Մահացածներին թաղում էին քարե անձավ-գերեզմաններում: Գտի՛ր կլոր քարե դռնով գերեզմանը:

Գտի՛ր երեք ագռավներին:

Գտի՛ր Գողգոթայի մոտակայքում գտնվող 6 ձիթենիները:

Այն բանից հետո, երբ Հիսուսի աշակերտներից մեկը մատնեց Նրան, թշնամաբար տրամադրված կրոնական առաջնորդները կարողացան Նրան ձերբակալել: Հռոմեացի կառավարիչ Պոնտացի Պիղատոսի առաջ նրանք պնդում էին, որ Հիսուսը վտանգավոր էր հռոմեացիների համար: Նրա պատճառով ժողովուրդը կարող էր ապստամբել հռոմեացիների տիրապետության դեմ և Հիսուսին թագավոր դարձնել: Պիղատոսը համոզված չէր, որ դա այդպես էր, բայց ամեն դեպքում Հիսուսին խաչելության հանձնեց:

Հուդա Իսկարիովտացին մատնել է Հիսուսին, բայց հետո զղջացել է դրա համար: Դու տեսնու՞մ ես նրան:

Գտի՛ր հռոմեացի կառավարիչ Պոնտացի Պիղատոսին:

Հռոմեացիները վախենում էին զինված ապստամբություններից: Գտի՛ր ազատության մարտիկների խումբը:

Հիսուսն Իր աշակերտ Հովհաննեսին խնդրեց հոգ տանել Իր մայր Մարիամի համար: Դու տեսնու՞մ ես նրանց երկուսին:

Ինչ-որ մեկը ցանկանում է քար նետել պարսատիկից: Դու տեսնու՞մ ես նրան:

Գտի՛ր 9 այսպիսի վահան:

Գտի՛ր 2 աստիճանները:

Դու տեսնու՞մ ես տաճարի տանիքը:

Գտի՛ր ավազը հարթեցնող մարդուն:

Մահվան դատապարտ-վածների ոտքերն ու ձեռքերը գամում էին խաչին: Գտի՛ր 2 փայտե մուրճերը:

Զինվորները ծաղրում էին Հիսուսին: Գտի՛ր փշե պսակը, որը նրանք դրել էին Նրա գլխին:

Հռոմեացի զինվորներն իրար մեջ բաժանում էին Հիսուսի հագուստները՝ վիճակ գցելով: Գտի՛ր դրանով զբաղված զինվորներին:

Նկարեց Փիթեր ՔԵՆԹԼ

Գտի՛ր երկու անտուն շներին:

Խաչի վրա գամում էին ցուցանակ, որի վրա նշվում էր դատապարտյալի մեղքը: Գտի՛ր երեք ցուցանակ:

Գտի՛ր երկու աղքատներին:

Թիթեռների հրաշալի փոխակերպումը

Բնության մեջ տեղի են ունենում անհավանական փոփոխություններ, որոնց հետևելը բավականին հետաքրքիր է:

Դու երբևէ մտածե՞լ ես, թե որտեղից են առաջանում թիթեռները, օրինակ՝ նարնջագույն-մոխրագույն հիասքանչ մոնարխները, որոնք առանձնանում են երկար ճանապարհ անցնելու ապշեցուցիչ ունակությամբ: Թիթեռներն իրենց կյանքը սկսում են շատ փոքրիկ սպիտակ ձվից: Հետո ձվից հայտնվում է թրթուրը: Թրթուրն ուտում և մեծանում է, մինչև դառնա մեծ, գծավոր թրթուր, որը կպչում է ճյուղին և սկսվում է «հրաշքը»: Նրա մարմինը պատվում է ամուր կանաչավուն կեղևով, որը կոչվում է հարսնյակ: Դրա մեջ թրթուրն աստիճանաբար փոխվում է: Ընդամենը մի քանի շաբաթ անց հարսնյակը պայթում է և դրա միջից հայտնվում է հիասքանչ նարնջագույն-մոխրագույն թիթեռը: Նա արևի տակ պարզում է թևերն ու ճախրում դեպի վեր:

Ո՞վ կարող էր մտածել, որ գիրուկ գծավոր թրթուրը երբևէ կվերածվի նրբագեղ թիթեռի: Ինչպես և թրթուրները, մենք քեզ հետ աստիճանաբար դառնում ենք այնպիսին, ինչպիսին մեզ ցանկանում է տեսնել Աստված: Երբեմն դժվար է սպասել, թե երբ ենք մենք մեծանալու, բայց կարելի է չկասկածել, որ Աստված մեզ միշտ կօգնի: Եթե մենք հավատում և լսում ենք Նրան, Նա օգնում է մեզ մեծանալ և փոխվել դեպի լավը:

ԵՐԿԻ՛Ր ԱՅԵ ԹԻԹԵՌԻԿԵԵՐԸ, ՈՐՈՇՔ ԼԱՎԱԳՈՒՅՇՆԵԵ ԵԿԱՐԱԳՐՈՒՄ ՔԵԶ.



ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻՆԵՐ

Պատմության կարևոր իրադարձությունները նշելիս ամենից հաճախ հիշում ենք տվյալ ժամանակաշրջանի թագավորներին: Սակայն հայերս ունեցել ենք թագուհիներ, որոնք կարևոր դերակատարություն են ունեցել պատմության որոշակի շրջանում և օգնել են իրենց ամուսիններին պետության կայացման և ամրապնդման գործերում: Մեզ հայտնի են 150 թագուհիներ, բայց այստեղ կառանձնացնենք Բագրատունյաց թագուհիներից երկուսին:

ԽՈՍՐՈՎԱՆՈՒՇ

Սանահին վանական համալիր

Աշոտ III Ողորմածը (953-977թթ.)՝ Անիի հիմնադիր-տիրակալը, ուներ նույնչափ ստեղծագործ ու բարերար կողակից՝ Խոսրովանույշ թագուհին, որը մեր պատմության մեջ անմահացել է իր շինարարական մեծագործություններով: Թագուհու նախնիների և տոհմի մասին տեղեկությունները քիչ են, սակայն զավակների և թոռների անունները պահպանվել են: Ունեցել է 3 որդի՝ Սմբատ, Գագիկ և Գուրգեն: Սմբատը ժառանգել է հոր գահը և դարձել հայոց թագավոր (977-990), ում հաջորդել է Գագիկը (990-1020): Գուրգենն առանձին թագավորական ճյուղ է հիմնադրել Լոռիում (Կյուրիկյաններ), դարձել Լոռու թագավոր, ապա նրա տոհմի իշխանությունը հաստատվել է Տավուշում, Գարդմանում, Փառիսոսում, Կախեթի մարզում:

Աղբյուրների համաձայն՝ Խոսրովանույշը 957 թվականին հիմնել է Սանահինի վանական համալիր Սբ Ամենափրկիչ եկեղեցին, որի կառուցումն ավարտվել է 966 թվականին: Երկրորդ խոշոր հիմնարկեքը Խոսրովանույշ թագուհին կատարել է Սանահինի կառուցումից տասը տարի անց: Նա 976 թվականին հիմնել է Հաղպատի վանական համալիրի առաջին և խոշորագույն եկեղեցին՝ Սուրբ Նշանը: Շինարարությունը տևել է բավականին երկար՝ մինչև 991 թվականը: Հաղպատի վանական համալիրին ևս վիճակված էր դառնալու միջնադարյան Հայաստանի հոգևոր-գիտակրթական կարևորագույն կենտրոններից մեկը: Հաղպատի վանական համալիրի կառուցմանը զուգահեռ Խոսրովանույշ թագուհին նախաձեռնել և իրականացրել է մեկ այլ մեծ աշխատանք՝ 972 թվականին վերանորոգել է Սևանա կղզու վանական համալիրը: Ահա այսպիսին էր Անիի առաջին տիրուհին՝ շինարար, ստեղծագործ և բարեշնորհ Խոսրովանույշ թագուհին:

ԿԱՏՐԱՆԻԴԵ 2

Մեր թագուհիների շարքում ուրույն տեղ է զբաղեցնում Խոսրովանույշի և Աշոտ III Ողորմածի որդու՝ Գագիկ I-ի տիկինը՝ Կատրանիդե II-ը: Նա ծնվել և մեծացել է արքայական ընտանիքում: Նա Սյունյաց արքա Վասակ I-ի և թագուհի Ծահանդուխտ II-ի դուստրն էր՝ ծնողների արժանավոր ժառանգը, ով աչքի է ընկնում իր մեծագործություններով: Կատրանիդե թագուհուն է վերագրվում Անիի Կաթողիկե Մայր տաճարի կառուցումը, որի շինարարությունն ավարտվում է 1001 թվականին: Ավանդազրույցի համաձայն՝ գործն ավարտին հասցնելու համար թագուհին չի խնայում նույնիսկ իր հարսանեկան օժիտն ու նվերները: Դեպի երկինք խոյացող վեհաշուք կառույցն իրականություն է դառնում հանճարեղ ճարտարապետ Տրդատի ջանքերով:

Անիի Կաթողիկե Մայր տաճարը դառնում է մայրաքաղաքի գլխավոր զարդերից մեկը: Անիի Մայր տաճարի հարևանությամբ ժամանակին կանգուն էր մի դամբարան, որի ավերակներն այսօր էլ կարող են տեսնել մեծ մայրաքաղաքի այցելուները: Այն Կատրանիդե II մեծ թագուհու դամբարանն էր, որտեղ արքունիքն ու ժողովուրդը թագուհուն մեծ շուքով էր հուղարկավորել:

Աստված ժպտում է, երբ...

Արի՛ միասին մտածենք՝ ի՞նչը կարող է քեզ մեծ ուրախություն պատճառել: Միգուցե ծննդյանդ տարեդարձին ցանկալի նվեր ստանալը, զբոսայգում թռչուններին կերակրելը, պարտեզից գույնզգույն ծաղիկներ հավաքելը, դպրոցում բարձր գնահատականներ ստանալը, ծովափին արևային լոգանք ընդունելը, ընկերներիդ հետ լավ ժամանակ անցկացնելը: Համաձայն ես չէ՞, որ կյանքում ժպտալու բազում առիթներ են լինում: Եվ այդ բոլոր բարիքները Աստված է մեզ տալիս: Նա ջանք չի խնայում մեզ ուրախ ու ժպտադեմ տեսնելու համար:

Իսկ ի՞նչ ես կարծում՝ մեր արարքները կարո՞ղ են ուրախություն կամ տխրություն պատճառել Աստծուն: Իհա՛րկե կարող են: Աստված ժպտում է ամեն անգամ, երբ չենք ստում և ազնվություն ենք դրսևորում, երբ մեր ունեցածը բաժնեկցում ենք, երբ անտարբեր չենք գտնվում տկարների նկատմամբ, երբ չենք ծուլանում հատկապես դասերը պատրաստելիս, երբ չենք նախանձում, այլ ուրախանում ենք մեր ընկերոջ հաջողություններով:

Կարելի է ասել՝ Աստված չի դադարում ժպտալ, երբ ապրում ենք Իր խոսքի և կամքի համաձայն:



Դե ի՞նչ, յանկություն ունե՞ս քո կյանքով ժպիր պարգևելու Հարցուն: Մտածի՛ր՝ ինչ կարող ես անել դրա համար և այդ մասին գրիր ծաղկաթերթիկների մեջ

ՄԻԱՍԻՆ ԳՈՒՆԱՑԱՐԴԵՆՔ ՄԵՑ ՀԱՄԱՐ ԽԱՉՎԱԾ ՓՐԿՅԻ ԽԱՉԱՓԱՅՏՐ

ԼՈՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ,
8Տ, ԱԲՈՎՅԱՆ

ՆԱԻՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ,
9Տ, ԱԲՈՎՅԱՆ

ԼԻԱ ՄԵԳՈԼՈՎԱ,
12Տ, ԵՐԵԱՆ, ՀԱԲ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ,
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՂ ԿՈՒՐ,
ԳՈՀԱՐ ՋԻՏՋՅԱՆ 16 ՏԱՐԵԿԱՆ

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

Բարի լուսի վանգեր վարկին
Զրնգվրնգալեն անո՜ւշ, անո՜ւշ
Լուսը բացվեց մեր աշխարհին
Ճրղճրղալեն անո՜ւշ, անո՜ւշ:
Հովկոում առուն խոխոջում է
Գլգլալեն անո՜ւշ, անո՜ւշ
Քամին բարակ շրնկշրնկում է
Շլկշլալեն անո՜ւշ, անո՜ւշ:
Կռունկն եկավ երամ կապած
Կրոկրոալեն անո՜ւշ, անո՜ւշ,
Կավավ փարին տաղ է կարդում,
Կրղկրղալեն անո՜ւշ, անո՜ւշ:
Հարան ու աղջիկ հանդերն եկան
Շորորալեն անո՜ւշ, անո՜ւշ
Ծաղկանց բուրմունքն անմահական
Արլաբլալեն անո՜ւշ, անո՜ւշ:

Հովհաննես Թումանյան